# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 028/10 - 25

<<01>>_ ապրիլի 2025թ                                        **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

***Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ***

***Նախագծող՝** <<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ*

***Տնօրեն՝ Է. ԴԱՎԹՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մինաս Ավետիսյան 2-րդ փողոց 11, 13, 15, 17 շենքերի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

**Նախահաշվային արժեքը կազմում է՝ 70 184.88 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:**

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝** **Ն. Սիրեկանյան**

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մինաս Ավետիսյան 2-րդ փողոց 11, 13, 15, 17 շենքերի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը</u>

*Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Է. ԴԱՎԹՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մինաս Ավետիսյան 2-րդ փողոց 11, 13, 15, 17 շենքերի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ տարածքի մաքրում և պատրաստում շինարարական աշխատանքների համար, հողային աշխատանքների իրականացում, քանդման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում: Շինարարական աղբի բարձում և տեղափոխում: Խճի նախապատրաստական շերտի իրականացում, բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով, ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, բետոնե դեկորատիվ սալիկներից անցուղիների կառուցում: Երկաթբետոնե հենապատերի կառուցման աշխատանքների իրականացում, պատերի ցեմենտ-ավազե սվաղում և ներկում ճակատային ներկով: Նոր նստարանների և աղբամանների տեղադրում ամրացումով: Մետաղական ցանկապատի պատրաստում և տեղադրում, մետաղական մասերի երկտակ ներկում: Աստիճանների և հարթակի կառուցում և երեսապատում բազալտե սալերով, մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում: Բուսահողի փռում կանաչ տարածքներում, սերմի ցանում: Նախատեսվում է իրականացնել գոյություն

ունեցող արտաքին լուսավորության համակարգի հենասյունների ներում և լրացուցիչ բարձակների տեղադրում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով Հաշվարկը կազմում է՝ **70 184.88** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2424.50** և մեքենաների շահագործման ինդեքսը **3156.46**

Նյութերի արժեքն ընդունված է 2024թ. N 05 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն՝* *Ն. Սիրեկանյան*

*Փորձագետ* *Տ.Վիրաբյան*